ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024թվականի N 133-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ «Հողային օրենսգրքի» 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 14.01.2010թ-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց /մշտական/ օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 16-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է***.

Տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողամասերը օտարելու համար.

1. Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող 06-034-0216-0002 կադաստրային ծածկագրով 0,011685 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

2. Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող 06-034-0216-0003 կադաստրային ծածկագրով 0,010976 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Աճուրդի լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**